

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՂԱՍԱՑՆԵՐ

Բ Ո Թ Ա Ն Խ Լ Ա Թ Ե Ց Ի

Անունը.— Ալիշան, մեր ազգային վիսպասանության վրա գրած իր հոգվածին մեջ, ռամկախոս գրողներու կարգին կհիշեն «Քօթան կամ Քոթնայ հլաթեցի» («Յուշիկը», բ. տպ. բ. հատոր, էջ 113): Նորայր Բյուզանդացի ալ գիտեն այս անունը «Քօթնայ» ձևով: (Տես «Հայկ. բառաքնություն», 1880 թ., էջ 2): Անունին ուղղական ձևը ունինք մեր տեսած տաղերուն մեջ երկու տարբեր ուղղագրությամբ, Քոթան և Քօթան, իսկ սեռականը Քոթանա, Քոթանայ և կամ Քօթնայ ձևերով: Անսովոր անուն մըն է կամ ավելի ճիշտը մակդիր մը կը թվի ըլլալ, քոթան, որուն իմաստը կմնա անծանոթ:

Տեղը. հլաթեցի մականունը, ինչպես վերը տեսանք, հիշած է Ալիշան. նույնը կգտնուի նաև մեր տեսած երեք տաղերէն մեկուն վրա: հլաթ հայտնի քաղաք է, որ տված է ԺԵ դարուն հանրածանոթ տաղասաց և զանձասաց Գրիգոր վրդ. հլաթեցին, մականւնյալ Մերենց:

Ժամանակը. Ալիշան ԺԶ դարու տաղասացներուն կարգին ամենեն վերջը դրած է Քոթանը, ոչ ստուգապիս, այլ «հաւանօրէն»: Մենք երեք տարբեր ձեռագիրներու մեջ ունինք իրեն պատկանող տաղեր: Այդ ձեռագիրներուն հնագույնը օրինակված է 1476-ին: Ուրեմն Քոթան ապրած է ԺԵ դարուն, եթե ոչ անկե առաջ:

Տարիքը. Քոթանի կենսագրության մասին բնավ տեղեկություն չէ հասած մեզի: Իր մեկ տաղին մեջ, որմէ երեք փոփոխակներ ունինք, կա տող մը, որ կհիշեն իր տարիքը այսպիս.

«Քառասուն տարին լըցեր եմ» կամ

«Ջվաքսուն տարին լըցեալ եմ»

Մեզի ավելի հավանական կթվի վերջինը, որովհետև նույն տաղին մեջ, քիչ վարը, կա վեպացին.

«Հիմիկ որ երկու տակ եմ

«Ալեւորեալ սպիտակ եմ

զինչ զարտ ի հունձ եկեալ եմ...»:

Տաղերը. երեք տաղեր ծանոթ են մեզի Քոթանի անունով, որոնց սկզբնավորություններն են.

1. «Ճրագ մարմնոյս է իմ խաւար».

2. «Այ Տէր տեւեց մեղայ քեզ».

Կգտնվին թ. 1485 ձեռագրին մեջ, երկիցս, տարբեր դրերով և տոմսերու ալակերպ դասավորությամբ, դժբախտաբար երկուքն ալ թերի: Նույնպես թ. 1399 ձեռագրին մեջ, բավական տարբեր ընթերցվածներով. մասնավորաբար ուշագրավ քն բաշխու անորոշ հարակատար ժամանակները, ինչպես

անցեր եմ—անցել եմ

կացեր եմ—կացել եմ

լըցեր եմ—լըցալ եմ և այլն:

Նշան մ է բարբառներու զանաղանության:

Այս վերջին օրինակը նախորդներուն պես 32-րդ տան կիսուն ընդհատված չէ, բայց ապահովաբար կարելի չէ ըսել, թե լման է:

3. «Քոթան քանի կենալ խաբան»

Կգտնվի թ. 1399 ձեռագրին մեջ, դժբախտաբար տեղ տեղ վնասված, և ընթերցումը կմնա տարակուսելի:

Աստուք երեքն ալ խոստովանության և զղջումի տաղեր են, հուզումով և զորավոր բացատրություններով գրված: Ահա մի կտոր.

«Այն օրն որ մայրս երեք զիս

մակաւ քէ չէր բերեր զիս

կամ շունճ էին կերեր զիս»:

Մարդ որքան տառապած պետք է ըլլա, որ մղվի այսպիսի բացականչության մը արձակելու...

Հոս իբրեւ նմուշ կուտանք իր տաղերն առաջինը, արտագրելով Ս. Հակոբյանց մատենադարանի թ. 1193 Գանձ գիրքին, որ օրինակված է 1476-ին, գեղեցիկ բոլորգրով:

Կարժե դիտել տալ, որ Քոթան կկիրարկեն հանգերու ալազանություն մը, որ շատ սովորական չէր այդ հին դարերուն:

ՏԱՂ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ *)

Ճըրագ մարմնոյս է իմ խաւար,
ակըն հոգոյս դարձեալ է շար,
տեսն աղփտաց գայ ընձ դըծար,
ի՞նձ ողորմեա տէր բարեհար:

Ողորմութեան չեմ լեալ բզգոյշ,
ւ ոչ եմ արկեալ ես փող ի գուշ,
ոչ եմ փալեալ մեղացն փուշ
այլ եմ խոցեալ յիմ աշերոյս:

Ծոյլ աղօթից ես չեմ բստէս,
ժամատեղաց չեմ լեալ հանդէս,
վաղըն դըժոխսն է ի՞նձ ի դէս,
որ եմ լցեալ մեղօք անդէս:

Յաչերս ունիմ հազար գերան,
ւ ամեն գերան քան ըզնեծան,
ւ այլոց ասեմ թէ զշիւղդ հան,
ես անարժանս և անպիտան:

Հիւրոց չեմ լեալ ասպնջական,
ւ ոչ եմ տընեալ տեղի յիմ տան,
ոչ օտարաց ածեալ սեղան,
եմ անողորմ քան ըզգազան:

Պահոց պահող չեմ այլ կերող,
որքոց ւ այրեաց եմ ես զրկող,
ընդ խնդացողսն եմ ես լացող,
չարեաց սիրող ւ ոչ ատեցող:

Քաղցելոց չեմ ջամբեալ ապուր,
ւ ոչ արբուցեալ ծարաւեաց ջուր,
ոչ ընկալեալ յիմ տանըն հիւր,
զկեանքս իմ ունիմ դառն և տըխուր:

Գիտեմ դու հայր իմ ես զըթած,
տէր և Աստուած իմ ողորմած,
ես քո ծառայ արեամբ զընած,
անոխակալ և ողորմած:

Հաց կու խնդրեմ ի՞նձ քաւ մի տալ,
ծուկըն հայցեմ ի՞նձ օձ մի տալ,
ծըրի փոխան կարի՞ն մի տալ,
անյիշաչար ւ անոխակալ:

Շուն եմ առ դուրս քո փաղցած,
չեմ ի հայցել ըզնաց մանկանց,
կամ ու սպասեմ ես փշրանաց,
թե կամենաս արժանեացայց :

Ամենեցուն տէր ես հաստատ,
ւ յամբս կարեաց ես դու ի շար,
պարգեատու ամէ՛հատատ,
զիս ի մեղաց արա ազատ:

Երեստղեմ

*) Այս վերնագիրը մենք կապելցիներ, բնագիրը
ունի միայն «Զոթանալ երբաբեցոյ»: